

ԳՈՌ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների և
դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ»
ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԳՐԻՉ**

Պետության քաղաքացիական ու ռազմական ոլորտների միջև հավասարակշռված հարաբերությունների կազմակերպումը պետութենաշինության կարևոր խնդիրներից է, որը կոչված է ապահովելու հասարակության բոլոր շերտերի կայունությունը: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես համընդհանուր զարգացումների և ներգրավված պետություն, իր պաշտպանության համակարգի առանցքը հանդիսացող զինված ուժերի բարեփոխման ընթացքում մեծ կարևորություն է տալիս դրա մի մասը հանդիսացող քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների հետագա բարելավմանը: Իսկ որպես առաջընթաց այս հարցում իր առանձնակի տեղն ունի նաև ՀՀ պաշտպանության նախարարության «Հանրային իրազեկման հայեցակարգը»՝ որպես հասարակական վերահսկողության կարևոր բաղադրիչ:

Հիմնարաներ- Հանրային իրազեկում, Ձինված ուժեր, հասարակական վերահսկողություն, ասիմետրիկ սպառնալիքներ, ԵԱՀԿ:

Պետության քաղաքացիական ու ռազմական ոլորտների միջև հավասարակշռված հարաբերությունների կազմակերպումը պետութենաշինության կարևոր խնդիրներից է, որը կոչված է ապահովելու հասարակության բոլոր շերտերի կայունությունը: Այս պարագայում հարցը վերաբերում է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությանը, որի բաղադրիչը հանդիսացող հասարակական վերահսկողության և ՀՀ ՊՆ «Հանրային իրազեկման հայեցակարգի» միջև կապի մասին է խոսվելու սույն հոդվածում:

Հասարակական վերահսկողությունը ենթադրում է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն իրականացնելու գործում հասարակության ակտիվ դերը և ներգրավվածությունը, ինչը հիմնականում պետք է իրականացվի քաղաքացիական հասարակության այնպիսի ինստիտուտների միջոցով, ինչպիսիք են ազատ մամուլը, հասարակական կազմակերպությունները: Չանգվածային լրատվական միջոցների և առհասարակ տեղեկատվական տեխնոլոգիաների դերի վերընթացը արդեն արձանագրված իրողություն է, ուստի պաշտպանության բնագավառի հիմնահարցերի ու ընդհանուր առմամբ կատարվող գործընթացների ճիշտ լուսաբանումից է մեծապես կախված բանակ - հասարակություն կապի արդյունավետությունը, որը պաշտպանության նախարարության կողմից որդեգրված պաշտպանական բարեփոխումների առաջնային նպատակներից է:

Ահա սրանից էր բխում միասնական տեղեկատվական քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը, որի դրույթները ամրագրված են ՀՀ ՊՆ Հանրային իրազեկման հայեցակարգում¹: Միասնական տեղեկատվական քաղաքականություն վարելիս հանրային իրազեկումը հատկապես կարևորվում է նրանով, որ ապահովում է զինված ուժերում ընթացող բազմաբնույթ գործընթացների թափանցիկությունը: Թափանցիկություն ասելով՝ ընդունված է հասկանալ մի իրավիճակ, երբ քաղաքացին, հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ կարող են իրենց անհրաժեշտ տեղեկատվությունն ստանալ անմիջապես այն տնօրինող պետական մարմնից առանց որևէ այլ միջոցի դիմելու²: Թափանցիկության միջոցով բարձրանում է հասարակության վստահությունը պետական կառավարման մարմինների նկատմամբ:

Փորձը ցույց է տալիս, որ հասարակության անվստահությունը հիմնականում ձևավորվում է տեղեկության բացակայության պայմաններում: Դրա արդյունքում ի հայտ են գալիս որոշակի ներածին (էնդոգեն) գործոններ, որոնք զգալիորեն ազդում ու աղճատում են իրականությունը՝ զանազան ասեկոսների առաջացման պատճառ դառնալով: Նման վիճակները կանխարգելելու է միտված հանրային իրազեկումը:

Յուրաքանչյուր պետության ռազմական անվ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տանգության երաշխավորը զինված ուժերն են: Գաղտնիք չէ, որ հասարակության պահանջմունքների առաջնահերթության սանդղակում անվտանգությունը առաջինների թվում չէ: Յուրաքանչյուր անհատ, հանդիսանալով անվտանգության սպառող, դրա կարևորությունը առավել ակնառու կերպով ըմբռնում է կոնկրետ սպառնալիքի առկայության դեպքում: Ընդ որում ասվածը մեծամասամբ վերաբերում է նաև քաղաքացիական հասարակություն կերտած շատ ժողովրդավարական պետություններին: Սակայն առավել վտանգավոր է այս պնդումը հատկապես այն պետությունների համար, որոնք ապրում են ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն կոչված իրադրությունում: Հայաստանի Հանրապետությունը այսօր գտնվում է նման իրավիճակում, ուստի հասարակության շրջանում անվտանգության դերի գիտակցման ուղղությամբ պետք է տարվի պետական քաղաքականություն, որն էլ իր հերթին կապահովի հետադարձ կապը՝ հասարակական վերահսկողություն զինված ուժերի նկատմամբ: Հանրային իրազեկման տրամաբանությունը կայանում է սրանում:

Պաշտպանության նախարարության կողմից իրականացվող միասնական տեղեկատվական քաղաքականությունը, որն ընդգրկում է բանակաշինության, պաշտպանական քաղաքականության, պաշտպանական բարեփոխումների և այլնի մասին պատշաճ տեղեկատվության տրամադրումը, միտված է հանրային իրազեկման միջոցով ապահովել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների և այլ ինստիտուտների հետ սերտ կապը: Ընդ որում, ՀՀ պաշտպանական գերատեսչությունը պետք է ելնի ներկա ժամանակաշրջանի այն պարզ իրողությունից, որ անցել է այն ժամանակը, երբ փոքր իրադարձությունները ենթադրում են փոքր փոխակերպումներ կամ գործընթացներ:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության առանցքային խնդիրն է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կազավորումը՝ 2013թ.-ից հետո այս հակամարտության բնույթը որոշակիորեն փոփոխություն է կրել: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խմբի միջնորդությամբ իրականացվող խաղաղ կարգավորման գործընթացին զուգահեռ ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում այլ զարգացումներ են ընթանում: Ադրբեջանը ռազմատենչ հայտարարություններ հնչեցնելուց բացի մշտապես շփման գիծը պահում է լարվածության մեջ՝ սանձազերծելով այսպես կոչված դիվերսիոն-հետախուզական գործողություններ: Ընդ որում, այս գործողությունների

բնույթը, ծավալը, հաճախակիությունը 2014թ.-ին հասել է անթույլատրելի սահմանների և շարունակում է աճել: Մարտական հերթապահություն իրականացնող հայկական ստորաբաժանումները փաստացի պարտադրված այս ռազմական գործողություններում ունեցել են կորուստներ: Հարց է առաջանում: Իսկ ինչպե՞ս է ընթացել հանրային իրազեկման գործընթացը այս բարդ իրադրությունում: Նախապես նշենք, որ վերը շարադրվածի առավել սրացումներ տեղի են ունեցել 2014թ.-ի հուլիս-օգոստոս և 2015թ.-ի հունվար-մարտ ամիսներին: Այս ժամանակահատվածներում Հայաստանի Հանրապետության պաշտպանական գերատեսչությունը, մշտապես ելնելով փոփոխվող օպերատիվ իրադրությունից, տրամադրել է պատշաճ պաշտոնական տեղեկատվություն, լուսաբանել է նույնիսկ մարտական գործողությունների կոնկրետ ուղղությունը, մարտական հենակետերում հակառակորդին հետ մղելու հետ կապված տեղեկատվություն: Եթե դիտարկենք նշված ժամանակահատվածներում զանգվածային լրատվության միջոցների անդրադարձները այս դեպքերին, դրանց վերլուծության ու մեկնաբանման մեթոդներին, կտեսնենք հետևյալը: ՋԼՄ-ների կողմից շփման գծում տիրող իրավիճակի, զարգացումների մասին տեղեկատվության հիմքում ընկած է պաշտպանության նախարարության պաշտոնական հաղորդագրությունը: Այնպիսի նուրբ հարցերի նկատմամբ, ինչպիսիք են զոհերի և վիրավորների քանակը, չկա սուբյեկտիվ վերաբերմունք կամ տարըմբռնում առաջացնելու վտանգ պարունակող հայտարարություն կամ տեսակետ: Սա է միասնական տեղեկատվական քաղաքականության կարևոր ձեռքբերումներից մեկը: Այսինքն՝ համապատասխան հանրային իրազեկումը, որը կարող է պարունակել նաև հասարակության մեջ բացասական ռեակցիա առաջացնող տեղեկատվություն, ապահովում է խուճապի կամ անվստահության մթնոլորտի առաջացման բացառումը: Հասարակության լայն շերտերը, լրատվության միջոցով իրազեկ դառնալով շփման գծում տեղի ունեցած գործողություններին, համապատասխան հետևություններ են անում անվտանգ կեցության հարցում: Արդյունքում՝ հասարակության անվտանգության պահանջմունքը դառնում է առավել շոշափելի և առաջնահերթ երևույթ տվյալ օբյեկտիվ իրականության պայմաններում՝ ապահովելով մեր կողմից վերը նշված հետադարձ կապը: Այսինքն՝ հասարակությունը գիտակցում է պետության ռազմական ապահովման դերը ազգային անվտանգության համատեքստում՝ արդյունքում ի հայտ բերելով ռազմական անվտանգության երաշ-

www.journal.lawinsstitute.am

խավոր, մարտունակ զինված ուժերում կատարվող գործողություններին իրագել լինելու անհրաժեշտության միտումը, նույնն է՝ զինված ուժերի՝ հասարակությանը հաշվետու լինելու սկզբունքային առաջնահերթությունը: Այստեղից է սկսվում հասարակական-քաղաքացիական վերահսկողությունը: Ուստի, հասարակության ամբողջական հայացքը չպետք է սևեռվի զինված ուժերին միայն Լեռնային Ղարաբաղում կամ ՀՀ արևելյան սահմաններում լարվածության աճի դեպքում ու վերջինիս նվազելու պարագայում երկրորդ պլան մղվի: Արդի փոխկապակցված և փոխալայմանավորող բարդ անվտանգային զարգացումների ժամանակաշրջանում, երբ ոչ ավանդական, բազմաբնույթ ու բազմաբովանդակ սպառնալիքները զգալիորեն փոխվել են, անվտանգության հիմնախնդիրը մնում է առաջնային:

Հաջորդ կարևոր հարցը զորամասային օղակում հանրային իրագեկման ապահովումն է: Դիշտ է, այսօր մեր զորամասերում հասարակության հետ կապերի գծով պատասխանատու քաղաքացիական անձինք չկան, բայց քաղաքացիների շփումը ներգործմասային ստորին օղակների հետ անհնար բան չէ և ներկայումս իրականացվում է այլ ձևով: Որպես օրինակ կարող ենք նշել Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակը: Բանակի հրամանատարի ցուցումով մշակվել է ժամկետային զինծառայողների ծնողներին դիմավորելու, ներգործմասային իրողությունների հետ ծանոթացնելու որոշակի կարգ: Դրանով քաղաքացիներին հնարավորություն է տրվում տեղեկանալու զինծառայողների կենցաղի, տեղավորման, ժամանցի հետ կապված հարցերին: Ընդ որում, մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում ցանկության դեպքում ծնողները կարող են լինել նաև մարտական դիրքերում, տեղեկատվություն ստանալ ռազմական գաղտնիք չպարունակող հարցերի վերաբերյալ: Չորամաս այցելած քաղաքացիներին իրենց տպավորությունները, առաջարկությունները կամ դիտողությունները արտահայտելու համար տրվում է համապատասխան գրառումների տեսք: Մեր կարծիքով, սա զորամասային օղակում հանրային իրագեկում իրականացնելու յուրատեսակ մոտեցում է, որը, բանակ-հասարակություն կապի խորացմանը նպաստելուց գատ, ունի նաև վերահսկողական լուրջ գործառնություն:

Ընդհանուր առմամբ նշենք հետևյալը. անցումային շրջանում գտնվող հասարակությունում, ինչպիսին նաև հայ հասարակությունն է, ինքնանպատակ առաջընթացը սովորաբար բերում է քառասյին իրավիճակի: Մեխանիկական արդիականա-

ցումը կամ նույնականացումը ամբողջական կործանման կարող են բերել պետական և հասարակական համակարգը: Ուստի, միջազգային փորձի մեխանիկական յուրացումը առանց հայրենական ավանդույթների և աշխարհայացքային տարրերի հաշվառման ի սկզբանե ենթակա է ձախողման: Միասնական տեղեկատվական քաղաքականությունը, պատշաճ հանրային իրագեկումը պետք է կատարվի վերը նշվածի սիներգիկ կիրառմամբ, ինչն էլ կատարում է Հայաստանի Հանրապետության պաշտպանական գերատեսչությունը:

Որպես ամփոփում նշենք՝ թեև գլոբալացման գործընթացները ավելի շատ ընդգրկում են քաղաքական, տնտեսական, սոցիալական բնագավառները, դա դեռ չի նշանակում, որ զինված ուժերը կամ պետության ռազմական կազմավորման համակարգը չեն ենթարկվում այդ գործընթացների ուղղակի ազդեցությանը: Գլոբալիզացիայի հետևանքով որակական փոփոխության է ենթարկվում նաև համընդհանուր անվտանգության միջավայրը՝ առաջ բերելով նախկինում անհայտ ասիմետրիկ բազմաթիվ մարտահրավերներ ու սպառնալիքներ: Արդյունքում զինված ուժերին ներկայացվում են բոլորովին այլ պահանջներ: Հիմքում ունենալով ռազմական անվտանգության երաշխավորը լինելու առաջնային խնդիրը՝ վերջինից պահանջվում է նաև լուծել նախկինում իր իրավասությունից դուրս գտնված խնդիրներ: Այս պարագայում պետությունները կանգնում են իրենց ռազմական կազմավորման համակարգը նորովի ձևավորելու կամ բարեփոխելու բարդ հարցի առաջ: Ռազմական գործողությունների բնույթի բազմաչափությունը բերում է զինված ուժերի դերի վերաիմաստավորման հարցի առաջացմանը: Մյուս գուգահեռ մեծապես կարևորվում է նաև այդ գործընթացներում զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության խնդրի ճշգրիտ կարգավորումը: Հետևաբար, Հայաստանի Հանրապետությունը՝ որպես համընդհանուր զարգացումներին ներգրավված պետություն, իր պաշտպանության համակարգի առանցքը հանդիսացող զինված ուժերի բարեփոխման ընթացքում մեծ կարևորություն է տալիս դրա մի մասը հանդիսացող քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների հետագա բարելավմանը: Իսկ որպես առաջընթաց այս հարցում իր առանձնակի տեղն ունի նաև ՀՀ Պաշտպանության նախարարության «Հանրային իրագեկման հայեցակարգը»՝ որպես հասարակություն-բանակ կապի ամրապնդման և զինված ուժերի՝ հասարակությանը հաշվետու լինելու գործիք:

¹ Հաստատվել է ՀՀ պաշտպանության նախարարի կողմից 2007թ.-ի նոյեմբերի 13-ին, տե՛ս www.mil.am/1320692449

¹ Տե՛ս Տ. Քոչարյան «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան, 2012թ., էջ 214

¹ Տե՛ս ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, տե՛ս www.mil.am/files/NATIONAL%20%20SECURITY%20STRATEGYarm.pdf

Գրականության ցանկ

1. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն
2. Տ. Քոչարյան «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան, 2012թ.

Գոր Կովմասյան

Ասպիրանտ кафедры международных отношений и дипломатии ЕГУ

РЕЗЮМЕ

Концепция МО РА по информированию общественности как компонент демократического гражданского контроля

Организация сбалансированных отношений между гражданскими и военными сферами государства является одним из важных задач государствоворения, целью которой является обеспечение устойчивости всех слоев общества. Республика Армения, как страна участвующая в общем развитии, в реформах своей оборонной системы придает большое значение дальнейшему совершенствованию механизмов гражданского контроля. И в этом вопросе имеет свое особое место концепция Минобороны РА по информированию общественности в качестве важного компонента общественного контроля.

Ключевые слова: информирование общественности, вооруженные силы, общественный контроль, асимметричные угрозы, ОБСЕ.

Gor Tovmasyan

Ph.D student of the chair of International relations and diplomacy of YSU

SUMMARY

The RA public information concept of the Ministry of Defense as democratic-civic supervision component

The organization of the balanced relationship between the State civil and military sectors is one of the important issues of the state-building, which is called to ensure the sustainability of all layers of society. The Armenian Republic, as a state involved in global developments, during the reform of the Armed Forces which is the core of its defense system, attaches a great importance to the further improvement of the civic supervision mechanisms which is a part of it. And as a progress in this issue the Public Information Concept of the Ministry of Defense has its special place, as an important component of the social supervision.

Keywords: Public Information Concept, Armed Forces, Social supervision, Asymmetric threats, OSCE.